ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 297 - Ա **11 ապրիլի 2016 թ.**

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության սահմանները պաշտպանելիս զոհված ժամկետային զինծառայող Դավիթ Ռազմիկի Հայրապետյանի ընտանիքին հատկացնել 100000/մեկ հարյուր հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Իվան Ասատրյանի միջոցով :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳԲԻՇՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թ. ապրիլի 11 - ի
N 297-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂԻ

հ/հ	ազգանուն, անուն	հասցե	հատկացված գումարի չափը դրամով	ծանոթություն
1.	Դավիթ Ռազմիկի Հայրապետյանի ընտանիք	Գեղարքունիքի մարզ, գ.Զոլաքար	100000/մեկ հարյուր հազար/	Զոհված զինծառայողի ընտանիք

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Կատարող՝ ՖՍՏԶ Վարչություն
Ա.Բաղեյան